

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻՆ 2013
ԹՎԱԿԱՆԻՆ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ /ՍԵՓԱԿԱՆ/ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԸՆԹԱՅՔԻ
ՄԱՍԻՆ

2013 թվականի ընթացքում մարզի 44 համայնքների տեղական բյուջերով եկամուտներ են նախատեսվել 1310596.6 հազ. դրամ, տեղական բյուջեներին ամրագրված եկամուտներից հավաքագրվել է 1320299.3 հազ. դրամ, կամ տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտների հավաքագրումը կատարվել է 100.7 %-ով, որից սեփական եկամուտներ՝ նախատեսվել է 458955.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 474699.0 հազ. դրամ, կամ կատարվել է 103.4.0 %-ով: Ըստ եկամտատեսակների հավաքագրումը կատարվել է.

- Համահարթեցման կարգով ՀՀ 2013թ. պետական բյուջեից մարզի համայնքներին 2013 թվականի համար նախատեսվել է 745479.0 հազ. դրամ դոտացիա, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է:
- Հարկային եկամուտների, տուրքերի եւ ոչ հարկային եկամուտների գծով տարվա համար համայնքների բյուջեներով նախատեսվել է՝
- Հողի հարկ՝ 73112.3 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 72627.9 հազ. դրամ, կամ կատարվել է 99.3%-ով:
- Գույքահարկ՝ 105453.4 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 116222.5 հազ. դրամ, կամ կատարվել է 110.2 %-ով:
- Պետական տուրքեր 7550.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 5633.7 հազ. դրամ, կամ կատարվել է 74.6 %-ով:
- Տեղական տուրքեր 16285.9 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 16677.6 հազ. դրամ, կամ կատարվել է 102.4 %-ով:
- Գույքի վարձակալությունից եկամուտներ՝ 175237.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 184342.0 հազ. դրամ, կամ կատարվել է 105.2 %-ով:
- Տեղական վճարներ՝ 3025.7 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 2428.5 հազ. դրամ, կամ կատարվել է 80.3 %-ով:
- Այլ ոչ հարկային եկամուտներ՝ 78159.3 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 76766.6 հազ. դրամ, կամ կատարվել է 98.2 %-ով:

Համայնքների 2013 թվականի տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրման տարվա արդյունքների ամփոփումից հետո, պարզվում է որ նախորդ

տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ սեփական եկամուտներն աճել են 34.5 տոկոսով գումարով՝ 121796.0 հազ. դրամ, իսկ հողի հարկի հավաքագրումը նվազել է 5.0 տոկոսով գումարով՝ 3851.0 հազ. դրամ, գույքահարկի հավաքագրումը աճել է 6.8 տոկոսով գումարով՝ 7406.0 հազ. դրամ, տեղական տուրքերի հավաքագրումն աճել է 27.7 տոկոսով գումարով՝ 3167.0 հազ. դրամ, գույքի վարձակալությունից եկամուտներն աճել են 48.3 տոկոսով գումարով՝ 110096.0 հազ. դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում սեփական եկամուտների հավաքագրումը՝ հիմնական եկամտատեսակների գծով /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, գույքի վարձակալություն/ մարզի միջինից բարձր ցուցանիշներով են կատարել՝

Համայնքի անվանումը	Ենդամենը եկամուտներ տոկոսներով	Որից՝ Սեփական եկամուտներ տոկոսներով
Եղեգնաձոր	103.5	108.0
Արենի	103.0	106.4
Աղնջաձոր	103.3	107.5
Արտաբույնք	104.4	130.8
Գնիշիկ	106.0	111.0
Իսաչիկ	101.6	103.9
Մալիշկա	100.7	106.0
Շատին	102.1	109.5
Չիվա	101.4	104.5
Ռինդ	102.4	107.4
Վարդահովիտ	101.3	103.8
Փոռ	101.1	108.1
Կարմրաշեն	101.2	103.1
Սարավան	104.7	104.8
Հորս	101.4	103.8

Ճիշտ է Մարզի Ագարակաձոր, Աղավնաձոր, Գետափ, Գողթանիկ, Ելփին, Թառաթումբ, Քարագլուխ, Վայք, Արտավան, Մարտիրոս, Ջերմուկ, Գնդկազ համայնքները 100 և ավելի տոկոսներով են կատարել իրենց ընդհանուր և սեփական եկեմուտները, սակայն բյուջեներին ամրագրված առանձին եկամտատեսակների հավաքագրումը չեն ապահովել:

Մարզի միջինից ցածր ցուցանիշներով են կատարել՝

Համայնքի անվանումը	Ենդամենը եկամուտներ տոկոսներով	Որից՝ Սեփական եկամուտներ տոկոսներով
Եղեգիս	96.9	85.0
Հորբատեղ	99.4	97.8
Արփի	99.9	99.6
Հերմոն	97.6	95.2
Սալլի	97.2	86.4
Վերնաշեն	99.4	98.5
Արին	93.5	84.4
Գոմք	99.0	98.4
Զառիթափ	95.9	95.2
Զեղեա	95.7	92.4
Հերիեր	97.9	92.3
Սերս	99.1	96.8

Ստեղծված իրավիճակը արդյունք է այն բանի, որ մարզի վերը նշված համայնքների ղեկավարները լրջորեն չեն զբաղվել եկամուտների հավաքագրման աշխատանքներով, մարզային խորհրդի նախորդ նիստերի որոշումները չեն քննարկել իրոնց ավագանու նիստերում, համապատասխան միջոցներ չեն ձեռնարկել իրենց բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրումն ամբողջությամբ իրականացնելու համար: Կարծում եմ, որ մարզի համայնքների ղեկավարները լուրջ հետևություններ պետք է անեն և գործուն միջոցներ ձեռնարկեն 2014թ. սեփական եկամուտների հավաքագրումը յուրաքանչյուր ամիս 100 տոկոսով ապահովելու համար:

Ելնելով վերոգրյալից Մարզխորհուրդը՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին .
ա/ Ձեռնարկել գործուն միջոցներ իրենց համայնքների բյուջեներին ամրագրված, ինչպես հարկային, այնպես էլ ոչ հարկային սեփական եկամուտների հավաքագրումը 100 %-ով ապահովելու ուղղությամբ:
2. Հանձնարարել մարզպետարանի ֆինանսական եւ սոցիալ տնտեսական զարգացման եւ տարածքային կառավարման վարչություններին ամենօրյա հետետողական աշխատանքներ իրականացնել համայնքների հետ մեկտեղ տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրումն ամբողջ ծավալով իրականացնելու համար, շարունակել եկամուտների հավաքագրման ամենօրյա օպերատիվ հաշվառման աշխատանքները:

բ/ Յուրաքանչյուր ամսում եկամուտների հավաքագրման արդյունքների ամփոփումից հետո թերացած համայնքների վերաբեյալ հարց նախապատրաստել եւ ներկայացնել մարզպետի քննարկմանը:

3. Սույն որոշմանն անրադառնալ տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրման տարեկան արդյունքներով:

Ձեկուցող՝

Ֆինանսական և սոցիալ տնտեսական
զարգացման վարչության պետ՝

Ռ.Հայրապետյան